

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ  
ՀՈՎՆԱՆԱԶՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ**

**2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 20.12.2016\_\_\_\_\_թիվ\_18\_\_\_\_\_որոշմամբ

նիստի ամսաթիվը

ՀՈՎՆԱՆԱԶՈՐ 2016թ.

## Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք .....	3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն .....	5
2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն .....	5
2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը .....	6
2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը .....	7
2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները 7	
2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ .....	8
2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն .....	11
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում .....	12
3.1. Համայնքի զարգացման տեսլական .....	12
3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ .....	13
4. ՀԶՄ ֆինանսավորում .....	16
5. ՀԶՄ մոնիթորինգ .....	17

## 1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Հարգելի համագյուղացիներ

Ձեզ եմ ներկայացնում Հովնանաձոր համայնքի զարգացման ծրագիրը: Համայնքի զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը ենթադրում է համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծում և համայնքի տեսլականի իրականացում:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Հովնանաձոր համայնքի 2017-2021թթ. զարգացման ծրագրի ընդունման նպատակն է սահմանել համայնքի տեսլականը 2021 թվականին, այդ տեսլականին հասնելու ռազմավարությունը և հիմնական նպատակները: Համայնքի զարգացման ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել համայնքի առկա ռեսուրսները (ակտիվները), պարտավորությունները, տեղական առանձնահատկությունները, երկրի տնտեսական և քաղաքական առկա իրավիճակը, ինչպես նաև առաջիկա զարգացումների կանխատեսումները: Զարգացման ռազմավարության և գերակայությունների սահմանման ժամանակ ցուցաբերվել է ինտեգրացված մոտեցում (տնտեսական, սոցիալական, շրջակա միջավայրի և այլ գործոններ):

Համայնքի զարգացման ծրագիրն իր մեջ ներառում է՝ համայնքի իրավիճակի բնութագիրը, վերլուծությունը և գնահատումը, համայնքի տեսլականը, ռազմավարության և ՀՀԾ-ի հիմնական նպատակների սահմանումը, նախատեսվող հանրապետական և մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերը, ֆինանսական իրավիճակի վերլուծությունը, գնահատումը և կանխատեսումը, ոլորտային ծրագրերը, գույքի կառավարման ծրագիրը, զարգացման ծրագրի մոնիթորինգը:

Համայնքի հիմնական պրոբլեմներն են՝

ա/ հաճախակի են լինում երաշտի տարիներ, որից գյուղացիները կորցնում են բերքի 50%-ը,

բ/ նրանք բավարարված չեն ոռոգման ջրով, իսկ նրանց ապրուստի հիմնական միջոցն ստացվում է բանջարա-բոստանային մշակաբույսերից, գ/համայնքը չունի փողոցային լուսավորություն.

դ/համայնքում ղեռնա 1975 թվից չկա դպրոց.  
ե/համայնքը գազաֆիկացված չէ.  
զ/համայնքի միջհամայնքային ու ներհամայնքային ճանապարհները գրունտային  
են, քարքարոտ ու դժվարանցանելի.  
է/համայնքը չունի խմելու ջրի ներքին ցանց. իսկ արտաքին ցանցի խողովակները ունեն  
70 տարվա պատմություն. կավաշեն են ու քայքայված: Կեղտաջրերի և որդեր ի  
ներթափանցումը ջրի ցանց կարող է դառնալ վարակիչ հիվանդությունների աղբյուր:

Ը/ Գործազրկության պատճառով երիտասարդները մեկնում են արտագնա աշխատանքների  
և չեն վերադառնում, որի հետևանքով նվազում է ամուսնության և ծնելիության թիվը

Համայնքում առկա է զանազան հիվանդությունների վտանգ, քանի որ՝

ա/ խմելու ջրի մանրէազերծում և ֆիլտրում չի կատարվում,

բ/ վտանգ կա, որ կեղտաջրերը կարող են խառնվել խմելու ջրին,

գ/ կենցաղային աղբահեռացում չի կատարվում:

Ծրագրի նախագծի հիմք է հանդիսացել Կ.Աբովյանի նախընտրական ծրագիրը, ինչպես  
նաև ՀՀ Լոռու մարզպետարանի հրատապ ծրագրերի ցանկում ընդգրկվելու փաստը:

Ծրագրի մշակմանը մասնակցել են համայնքապետարանի աշխատակազմը, համայնքի  
ավագանին, քննարկվել ու հաշվի են առնվել հանրային լսումների արդյունքում կատարված  
բոլոր առաջարկությունները: Ծրագիրը հաստատվել է համայնքի ավագանու անդամների  
կողմից:

## **2. Համայնքի իրավիճակի նկարագրություն**

### **2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն**

Գյուղը գտնվում է մարզկենտրոնից 53 կմ հեռավորության վրա դեպի արևելք: Հովնանաձոր (նաեւ Թազագյուղ, Հովանդարա) գյուղն ունի մոտ 2 դարի պատմություն, որի վկայությունն է գյուղի հին ծխամատյաններում նշված մարդկանց ծննդյան թվերը, որոնք ծնվել եւ ապրել են այդ գյուղում, ինչպես նաեւ գյուղի կենտրոնում գտնվող հին գերեզմանների վրա նշված տարեթվերը:

Ենթադրվում է նաև, որ գյուղն ունի ավելի հին պատմություն, քանի որ գյուղի արևելյան կողմում կան գերեզմաններ, որոնք գյուղի ամենատարեցների վկայությամբ եկեղեցականների գերեզմաններ են եւ գտնվում են քիչ ավելի վերև գտնվող «Սուրբ Սարգիս» եկեղեցու հարևանությամբ, որի դեռևս մնացած քարերի վրա կան հետաքրքիր նկարներ ու քանդակներ մարդկանց եւ կենդանիների պատկերներով:

Գյուղը գտնվում է ծովի մակերեսույթից 1480մ բարձրության վրա, շրջապատված է բարձր քարաժայռերով, սարադաշտերով, լանջերով ու սառնորակ աղբյուրներով: Մեծ Ական ակունքից բխող ինքնահոս ջուրը ապահովում է գյուղի բնակչությանը խմելու ջրով: Չնայած գյուղի յուրաքանչյուր ծովից չունի առանձին ջրի ծորակ, բայց գյուղի տարբեր կողմերում կառուցված հին հուշարձան-աղբյուրներից օգտվելով, բնակչությունը չի դժգոհում, քանի որ ցանկացած պահի կարող է օգտվել սարերից եկող մաքուր ու սառնորակ ջրից:

Գյուղի կլիման երկարատեւ ձմռանը ցուրտ է, իսկ կարճատեւ ամռանը՝ ոչ շատ տաք:

Հաճախակի են կամ չորային երաշտի տարիները, կամ էլ անձրեային կարկտահարությունը: Երկու դեպքում էլ տուժում է գյուղատնտեսությամբ զբաղվող գյուղացին: Ոռոգման ջուր չունենալու եւ ցածր կարգի, քարքարոտ հողեր ունենալու պատճառով համայնքը դժվարանում է կազմակերպել գյուղ. մթերքների արտադրությունը: Հիմնականում զբաղվում են անասնապահությամբ: Կարտոֆիլի եւ բանջարա-բոստանային կուլտուրաների արտադրությունը ցածր բերքատվության պատճառով քիչ է կատարվում, այնքան որ հազիվ բավարարում է համայնքի բնակիչների սեփական պահանջարկը: Յորենի արտադրությունն էլ ցածր բերքատվության տոկոս ունի՝ 1հա-ից 2-3 տոննա, եթե բնության քմահաճույքն էլ հաշվենք, գյուղացին կորցնում է այդ սակավ բերքի 40-50%-ը:

Գյուղը չունի միջնակարգ դպրոց դեռևս 1973-73թթ.: Գյուղն ունի 1992-1993թ.թ. կառուցված բուժկետ:

1948-ին բնակչության մի մասը տեղափոխվել է Հոկտեմբերյանի շրջան, Կիրովական, Ստեփանավան:

Համայնքի հիմնախնդիրների մեջ կանորվում են խմելու ջրի ներքին ցանցի կառուցումը, համայնքի գազաֆիկացումը, համայնքային կենտրոնի կառուցումը, ներհամայնքային ճանապարհների վերանորոգումը, ոռոգման համակարգի կառուցումը:

Համայնքի բնակչության առկա թիվը՝90,

այդ թվում՝

0-4 տարեկան-5

8-14 տարեկան-7

17-18 տարեկան –3

16-62 տարեկան- 64

63 և ավելի – 11

Բնակչության սոցիալական կազմը՝

Այդ թվում՝

թոշակառուներ –15

հաշմանդամներ – 4

որից՝

30-62 տարեկան – 4

աշխատանք ունեցողներ – 12

գործազուրկներ – 52

ընտանիքների (ծխերի) թիվը-30

## 2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

- Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է 4.3 մլն դրամ:
- Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է 672.8000 դրամ( 15%),
- Համայնքում չկա արդյունաբերական ձեռնարկություններ:
- Աղյուսակում բերված են համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքը և ծավալները 2016թ.

Գյուղատնտեսական արտադրանքի տեսակը	Ցանքատարածության չափը	Արտադրանքի քանակը
կարտոֆիլ	3հա	20տ
բանջարեղեն	1հա	6.7տ

Անասունների տեսակը	Գլխաքանակը
Խոշոր եղջերավոր անասուններ	105
Այդ թվում կովեր	41
Մանր եղջերավոր անասուններ	89
Այդ թվում մայրեր	70
խոզեր	12
Այդ թվում մայրեր	1
թռչուններ	78
Այդ թվում հավեր	60
մեղվաընտանիքներ	120

- Համայնքում գործել է ութամյա դպրոց,որը 1975թ. շենքի պայմանների վատ վիճակի և մանկավարժներ չունենալու պատճառով փակվել է:
- Համայնքում գործում է մեկ բուժկետ, որն ունի 1 բուժքույր,որը գալիս է հարևան Ագարակ համայնքից:
- Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված են 2 ընտանիքներ,
- Համայնքում գործազրկության մակարդակը կազմում է 70%:
- Հովնանաձոր համայնքի զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող բնական, պատմական և մշակութային հուշարձանները`
  - Սուրբ Սարգիս եկեղեցի,
  - քարայր-կացարաններ
  - բարձրաքանդակ նշաններ,

### 2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը

- Համայնքի վարչական տարածքում պետության կողմից գալիք հինգ տարիների համար նախատեսված է խմելու ջրով ապահովումը:

### 2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

N	Եկամուտի տեսակը	2017	2018	2019	2020	2021
	Ընդամենը եկամուտներ	4.3 մլն	4.5 մլն	4.7 մլն	5 մլն	5.5 մլն
Ա	Հարկային եկամուտներ	672.8 հզ.դրամ	872.8 հզ. դրամ	1072.8 հզ. դրամ	1372.8 հզ. դրամ	1872.8 հզ. դրամ
1	Հողի հարկ	380 հզ. դրամ	480 հզ. դրամ	580 հզ. դրամ	730 հզ. դրամ	980 հզ. դրամ

2	Գույքահարկ	292.8 հզ. դրամ	392.8 հզ. դրամ	490.2 հզ. դրամ	642.8 հզ. դրամ	892.8 հզ. դրամ
3	Եկամտահարկ					
4	Այլ հարկային եկամուտներ					
Բ	Տուրքեր					
1	Պետական տուրքեր					
2	Տեղական տուրքեր					
Գ	Ոչ հարկային եկամուտներ					
1	Վարձավճարներ	162.2 հազ	162.2 հազ	162.2 հազ	162.2 հազ	162.2 հազ
3	Տեղական վճարներ					
4	Այլ ոչ հարկային եկամուտներ					
Դ	Դոտացիա	3.5 մլն	3.5 մլն	3.5 մլն	3.5 մլն	3.5 մլն
Ե	Եկամուտներ կապիտալ գործառնություններից					
Զ	Տարեսկզբի ազատ մնացորդ					

## 2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Հովնանաձոր համայնքի առջև ծառայած ընդհանուր հիմնական խնդիրներն են՝

Համայնքի բնակչության 80%-ը գտնվում են սոցիալապես վատ պայմաններում: Համայնքում առկա է զանազան հիվանդությունների վտանգ: Համայնքի զարգացման հիմնական խոչընդոտող գործոններն ու դժվարությունները նշված են ստորև.

1) Գործարար միջավայրի բարելավմանը և ձեռնարկատիրության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

- .ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման դժվարությունը,
- .բնակչության գործարար ոլորտի գիտելիքների պակասը,
- . ֆինանսի բացակայությունը
- .Համայնքի գույքի կառավարման խոչընդոտներն են՝
- .Ֆինանսական սղությունը,

2) Երիտասարդության ներգրավմամբ ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպման խոչընդոտող գործոններն են՝

- .մշակութային կյանքի պասիվությունը,

3) Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությանը խոչընդոտող գործոններ են՝



.գործազրկությունը,

. գազաֆիկացման բացակայությունը

.,խմելու ջրի անորակությունը/մանրէագերծման, ֆիլտրման բացակայությունը/,

.խմելու ջրի անհավասարաչափ բաշխումը,

4) Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսմանը խոչընդոտող գործոններն են՝

.սպորտհրապարակ, մարզադահլիճ և մարզագույք չունենալը,

5) Համայնքում բնակարանային շինարարության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝ .համայնքաբնակների աղքատությունը,

6) Համայնքի բնակավայրերի կառուցապատմանը, բարեկարգմանը և կանաչապատմանը, համայնքի աղբահանությանը և սանիտարական մաքրմանը, կոմունալտնտեսության աշխատանքներում ապահովմանը, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանմանը և գործունեության ապահովմանը խոչընդոտող գործոններն են՝

.ջրմուղ-կոյուղու բացակայությունը,

.խմելու ջրագծի քայքայված վիճակը և ներքին ցանցի բացակայությունը,

.միջոցների սղությունը,

.փողոցային լուսավորության բացակայությունը:

7) Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպմանը, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանմանը և շահագործմանը խոչընդոտող գործոններն են՝

.միջհամայնքային, ներհամայնքային և դաշտափջյան ճանապարհների քայքայված վիճակը,

.հանրային տրանսպորտի բացակայությունը,

.ճանապարհային նշանների բացակայությունը

8) Պետության պաշտպանության իրականացման աջակցմանը խոչընդոտող գործոններն են՝

.թշնամու հարձակման վտանգը,

9) Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացմանը խոչընդոտող գործոններն են՝

.քաղաքացիական պաշտպանության գիտելիքների պակասը,

.սեյսմիկ գոտում գտնվելը,

.աղետներին պատրաստվածության ծրագրի բացակայությունը,

.համայնքաբնակները պատրաստ չեն համապատասխան քայլերի դիմել վերահաս և փաստացի վտանգի դեպքում:

10) Գյուղատնտեսության զարգացման խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.ռոռզման ցանցի բացակայությունը,,  
.որակյալ սերմի բացակայությունը,  
.սպառման շուկայի դժվար հասանելիությունը,  
.գլխավոր մայրուղուց հեռու լինելը:

11) Համայնքում շրջակա միջավայրի պահպանությանը խոչընդոտող գործոններն են՝  
.հեղեղատարների բացակայությունը,  
.աղբահեռացում չկազմակերպելը,

12) Զբոսաշրջային հեռանկարներ ունեցող Հովնանաձոր համայնքում՝ զբոսաշրջության զարգացման խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.համայնքի հեռավորությունը մայրաքաղաքից,  
.գովազդի բացակայությունը,  
.տուրիստական գործակալությունների հետ կապ չունենալը,

13) Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպմանը խոչընդոտող գործոններն են՝

.գործարար միջավայրի բացակայությունը,  
.ձեռնարկությունների բացակայությունը,  
.երիտասարդների միգրացիան,

14) Համայնքում ծնելիության և բազմազավակության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.երիտասարդների չամուսնանալը,  
.երիտասարդ ընտանիքների սոցիալապես պաշտպանված չլինելը,  
.պետության կողմից աջակցության պակասը, աղքատությունը,

15) Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացմանը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմաններ իստեղծմանը խոչընդոտող գործոններն են՝

.բնակչության իրազեկվածության պակասը,.բուժ-գործիքների պակասը,.նեղ մասնագիտությամբ բժիշկների համայնքներ չհաճախելը,.անվճար բուժ սպասարկման քիչ լինելը,.ջեռուցման բացակայությունը

16) Համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.համայնքում համապատասխան պայմաններ չունենալը,

17) Համայնքում առկա ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը նպաստելուն խոչընդոտող գործոններն են՝

.հեռահաղորդակցման տեխնոլոգիաների գիտելիքների պակասը,  
.ինտերնետ կապի անորակությունը,

.տեխնոլոգիաների անհասանելիությունը որոշ ընտանիքներին,

18) Համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով բարեգործության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.համայնքի երիտասարդների կամավորության պակասը,

.հանրային համախմբվածության և մասնակցության թույլ լինելը,

.տեղեկատվական տեխնոլոգիաներին չտիրապետելը:

#### ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ ԾՆՈՂՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Գյուղացիները գտնվում են սոցիալապես վատ պայմաններում, քանի որ՝

ա/ հաճախակի են լինում երաշտի տարիներ, որից գյուղացիները կորցնում են բերքի 50%-ը,

բ/ նրանք բավարարված չեն ոռոգման ջրով, իսկ նրանց ապրուստ ի հիմնական միջոցն ստացվում է բանջարա-բոստանային մշակաբույսերից,

գ/ հնարավորություն չունեն որակյալ սերմեր և վառելանյութ ձեռքբերելու,

դ/ գյուղացին համայնքի պրոբլեմները իր սեփականը չի համարում,

ե/ գյուղացին չի կարողանում իրացնել իր արտադրանքը,

զ/ գյուղացին չի կարողանում կատարել իր հարկային պարտավորությունները

է/ Գործազրկության պատճառով երիտասարդները մեկնում են արտագնա աշխատանքների: Համայնքում առկա է զանազան հիվանդությունների վտանգ, քանի որ՝

ա/ խմելու ջրի մանրէազերծում և ֆիլտրում չի կատարվում,

բ/ վտանգ կա, որ կեղտաջրերը կարող են խառնվել խմելու ջրին,

գ/ ջուրը հավասարաչափ չի բաշխված, ուստի բնակչության մի մասը հաճախ զրկվում են ջրից,

դ/ կենցաղային աղբահեռացում չի կատարվում:

#### 2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

Համայնքի ուժեղ կողմեր	Համայնքի թույլ կողմեր
-----------------------	-----------------------

<p>Բուժկետի առկայություն</p> <p>.Բերրի հողերի առկայություն</p> <p>Ալպյան մարգագետինների առկայություն</p> <p>.Հեռահաղորդակցության առկայություն</p> <p>.Զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող հնություններ</p> <p>.Ողակի ընտրությամբ ղեկավար ընտրելու հնարավորություն</p>	<p>.Ոռոգման ցանցի բացակայություն</p> <p>.Խմելու ջրի ցանցի անմխիթար վիճակ</p> <p>.Սոցիալապես ծանր վիճակում գտնվող ընտանիքներ</p> <p>.Ֆինանսական ռեսուրսների բացակայություն</p> <p>.Ծնելիության նվազում</p> <p>.Արտագնա աշխատանքի մեկնողների թվի աճ</p> <p>.Թերզբաղվածության բարձր մակարդակ</p> <p>.Ներհամայնքային ճանապարհների անբարեկարգ վիճակ</p> <p>.Տրանսպորտային ցանցի բացակայություն</p> <p>.Աշխատատեղերի պակաս</p> <p>Վթարային տների առկայություն</p> <p>Դպրոցի բացակայություն</p> <p>Մանկապարտեզի բացակայություն</p> <p>Համայնքային կենտրոնի բացակայություն</p>
<p><i>Հնարավորություններ</i></p>	<p><i>Սպառնալիքներ</i></p>
<p>.Ոռոգման ջրի պաշարի առկայություն</p> <p>.Խմելու ջրի պաշարի առկայություն</p> <p>.Պետական և միջազգային ծրագրերի մեջ ընդգրկվածություն</p> <p>.Բերրի հողերի առկայություն</p> <p>.Տուրիստական հետաքրքրություն ներկայացնող վայրեր</p>	<p>.Տարերային աղետների վտանգ</p> <p>.Գյուղ. մթերքների գների նվազում</p> <p>.Գյուղատնտեսական մթերքների արտահանման դժվարություն</p> <p>.Սպառման շուկաների դժվար հասանելիություն</p> <p>.Տրանսպորտային հանգույցների դժվար հասանելիություն</p> <p>.Խիստ կլիմա /ցրտահարություն/</p> <p>.Արտագաղթ. Հիվանդությունների առաջացման վտանգ</p>

### 3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

#### 3.1. Համայնքի զարգացման տեսլական

Համայնքի զարգացման տեսլականն է՝

Ունենալ զարգացած և հզոր համայնք, որտեղ առկա են ձեռնարկություններ, և մարդիկ ապրում են արժանապատիվ կյանքով:

- Համայնքի ուժեղ կողմերի և միկրո-հնարավորությունների վրա հիմնված վեր հանել համայնքի խնդիրները, և խոչընդոտները հաղթահարելով՝ ապահովել կայուն, շարունակական զարգացում ու հզորացում:
- Հետևողականորեն բարեփոխումներ կատարելու միջոցով բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, համայնքը դարձնել զարգացած, գեղեցիկ և բարեկարգ:
- Բարեփոխումներ կատարելով նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին.
- Գյուղացիներին ապահովել մաքուր խմելու ջրով,
- Զարգացնել բուսաբուծությունն ու անասնաբուծությունը
- Ակտիվացնել բնակչության մշակութային կյանքը,
- Կազմակերպել համայնքաբնակների հանգիստը
- Ապահովել բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների նորմալ և անվտանգ երթևեկությունը:
- Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թիվը նվազեցնել 10%-ով,
- Համայնքի սեփական տարեկան եկամուտները հասցնել 30%-ով աճի,
- Համայնքում գրանցված բնակիչների թվի աճը նախորդ տարվա համեմատ հասցնել 3%-ով աճի:

### **3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ**

- 1) Գործարար միջավայրը բարելավել և ձեռնարկատիրությունը խթանել:
- 2) Համայնքի գույքը կառավարել:
- 3) նախադպրոցական կրթությունը և արտադպրոցական դաստիարակությունը կազմակերպել:
- 4) Ակտիվ մշակութային և մարզական կյանքն ակտիվացնել՝ երիտասարդության ներգրավմամբ:
- 5) Բարելավել համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը:
- 6) Ապահովել ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը:
- 7) Համայնքում բնակարանային շինարարությունը խթանել:
- 8) Ապահովել համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը: Կազմակերպել համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը: Կոմունալ տնտեսության աշխատանքներն ապահովել, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը կազմակերպել,

- 9) Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքը կազմակերպել, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանումը և շահագործումը կազմակերպել:
- 10) Աջակցել պետության պաշտպանության իրականացման հարցում:
- 11) Իրականացնել աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումները:
- 12) Գյուղատնտեսության զարգացումը խթանել:
- 13) Կազմակերպել համայնքում շրջակա միջավայրի պահպանությունը:
- 14) Զբոսաշրջային հեռանկարներ ունեցող Հովնանաձոր համայնքում զբոսաշրջության զարգացումը խթանել:
- 15) Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպումն ապահովել:
- 16) Համայնքում ծնելիությունը և բազմազավակությունը խթանել:
- 17) Ապահովել համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը:
- 18) Համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցությունը խթանել:
- 19) Համայնքում առկա ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը նպաստել:
- 20) Բարեգործությունը խթանել՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով:

#### ԾՐԱԳԻՐ 1

Հովնանաձոր համայնքում գյուղատնտեսության զարգացումը խթանելու նպատակով կիրականացվի «**Ոռոգման ցանցի կառուցում**» ծրագիրը: Ծրագրի անմիջական նպատակն է՝ համայնքաբնակների եկամուտների աճի ապահովումը: Ծրագրի միջանկյալ արդյունքներն են՝

1. Կառուցված ոռոգման ջրագիծ

2. Կառուցված ոռոգման ներքին ցանց

Ծրագրի հիմնական գործողություններն են՝

1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

1.1. Ձեռք բերել 1 կմ երկարության համար ազբոխողովակներ և ցեմենտ:

1.2. Համայնքի կողով անցնող գետից մինչև վարելահողեր տանող ուղին փորել:

1.3. Խողովակաշարն անցկացնել:

2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

2.1. Ձեռք բերել ջրատար 1 կմ երկարության համար խողովակներ, էլեկտրոդ և փականներով բաժանարարներ 20 հատ ոռոգման ներքին ցանցի համար:

2.2. Խողովակները միացնել:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներից համայնքի կողմից ներդնել աշխատուժ և անհրաժեշտ գումարի 3%-ը: Ծրագրի հիմնական ռիսկերն են՝ դրամական միջոցների ձեռքբերումը: Ծրագրի հիմնական շահառուներն են Հովնանաձոր համայնքի բոլոր 90 բնակիչները: Ծրագիրն սկսվում է 2017թ., ավարտվում՝ 2021թ.: Ծրագրի համառոտ նկարագրություն. Կատարել չափագրում: Կազմել պլանային նախագիծը և բյուջեն: Գտնել դոնոր կազմակերպություն: Ներկայացնել գրանտային ծրագիր դոնոր կազմակերպությանը: Ծրագրի հավանության արժանանալուց հետո, ստանալ համապատասխան գումարը և կազմակերպել աշխատանքները: Կատարել համայնքային ներդրումներ: Համայնքում ներկայումս չի ոռոգվում է 41հա տարածություն: Ծրագրի իրականացումը կապահովի 41հա ոռոգում՝ համայնքաբնակներին ընձեռնելով հնարավորություն ավելացնել դաշտավարության և գյուղատնտեսության ծավալները և հետևաբար նաև եկամուտները: Ծրագրի բյուջեն կազմում է՝

Ընթացիկ ծախսեր՝ 0,5 մլն դրամ

Կապիտալ ծախսեր 1 մլն դրամ

Ընդհանուր բյուջեն՝ 1,5 մլն դրամ

## ԾՐԱԳԻՐ 2

Հովնանաձոր համայնքում կոմունալ տնտեսության աշխատանքները կազմակերպելու նպատակով կիրականացվի «Որակյալ խմելու ջրով ապահովում և ջրմուղ-կոյուղու կառուցում» ծրագիրը: Ծրագրի անմիջական նպատակն է՝ համայնքաբնակներին բավարար քանակի մանրէազերծված ջրով և կոյուղով ապահովումը: Ծրագրի միջանկյալ արդյունքներն են՝

1. Խմելու ջրի ջրագծի կառուցում, ներքին ցանցի կառուցում,

2. Կառուցված ջրմուղ-կոյուղի

Ծրագրի հիմնական գործողություններն են՝

1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

- 1.1. Ձեռք բերել 75.50 մմ տրամագծով 540 գծամետր խողովակներ,
  - 1.2. Գործող ջրագծի վնասված խողովակները փոխարինել նորով:
  - 1.3. Տեղադրել փականով բաժանարարները՝ բաշխումը կատարելով հավասարաչափ:
  - 1.4. Ներքին ցանցի խողովակների անցկացում:
  - 1.5. Պարբերաբար կատարել խմելու ջրի մանրէազերծում սանէպիդիկենտրոնի օգնությամբ:
- 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.
    - 2.1. Ձեռք բերել ազբոխողովակներ 1կմ-ի համար, ջրհորի մետաղյա կափարիչներ, ցեմենտ և փականներ ջրմուղ կոյուղու համար:
    - 2.2. Խողովակները միացնել:
    - 2.3. Համայնքաբնակներին աջակցել, որպեսզի բնակարաններից միացումներ տան դեպի կոյուղագիծ:
    - 2.4 Կազմակերպել աղբահանություն:
- Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներից համայնքի կողմից ներդնել աշխատուժ և անհրաժեշտ գումարի 3%-ը: Ծրագրի հիմնական ռիսկերն են՝ դրամական միջոցների ձեռքբերումը: Ծրագրի հիմնական շահառուներն են Հովնանաձոր համայնքի բոլոր 90 բնակիչները: Ծրագիրն սկսվում է 2017թ., ավարտվում՝ 2021թ.: Ծրագրի համառոտ նկարագրություն. Կատարել չափագրում: Կազմել պլանային նախագիծ և բյուջե: Գտնել դոնոր կազմակերպություն: Ներկայացնել գրանտային ծրագիր դոնոր կազմակերպությանը: Ծրագրի հավանության արժանանալուց հետո, ստանալ համապատասխան գումարը և կազմակերպել աշխատանքները: Կատարել համայնքային ներդրումներ: Ներկայումս համայնքում ջուրը հավասարաչափ չի բաշխված, ջրի քանակը չի բավարարում բոլորին և ջուրը չի ֆիլտրվում ու չի մանրէազերծվում, բնակչության 80%-ը ջուր չունեն: Ծրագրի իրականացումից հետո համայնքի բոլոր բնակիչները կապահովվեն բավարար քանակի մաքուր ջրով: Համայնքը չունի ջրմուղ-կոյուղի: Ծրագրի իրականացմամբ համայնքի բոլոր 90 շահառուները կօգտվեն ջրմուղ կոյուղուց: Համայնքում առկա զանազան հիվանդությունների վտանգը կվերանա, կոմունալ տնտեսությունը կզարգանա:
- Ծրագրի բյուջեն կազմում է՝  
 Ընթացիկ ծախսեր՝ 2.5մլն դրամ  
 Կապիտալ ծախսեր՝ 10մլն դրամ  
 Ընդհանուր բյուջեն՝ 12.5մլն դրամ:

#### 4. ՀԶԾ ֆինանսավորում



ՀՁԾ-ում ընդգրկված ծրագրերը ֆինանսավորվելու են՝

- Համայնքի սեփական եկամուտներից,
- Ներքին պաշտոնական դրամաշնորհներից
- Արտաքին պաշտոնական դրամաշնորհներից,
- Բարեգործություն/նվիրատվություններից
- Այլ աղբյուրներից,

ՀՁԾ-ում ընդգրկված ծրագրերի իրականացման համար չկան առկա միջոցներ, նրանց համար անհրաժեշտ է գումար ապահովել:

## **5. ՀՁԾ մոնիթորինգ**

ՀՁԾ մոնիթորինգը կիրականացվի համաձայն Մոնիթորինգի անձնագրով (Հավելված 1) սահմանված ցուցանիշների և ժամանակացույցի:

**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր**

**«Ոռոգման ցանցի կառուցում Հովնանաձոր համայնքում»**

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	<b>«Ոռոգման ցանցի բացակայություն»</b>					
Ծրագրի անմիջական նպատակ	Համայնքի ոռոգման ցանցի կառուցում					
	<b>Ցուցանիշներ</b>	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2016	2017	2018	2019	2020
Ծրագրի անմիջական նպատակն է՝ համայնքաբնակների եկամուտների աճի ապահովումը	0	0.3	0.6	0.9	1.2	1.5
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Համայնքի ոռոգման ցանցի կառուցում, բերքատվության աճ					
	<b>Ցուցանիշներ</b>	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2016	2017	2018	2019	2020
Ծրագրի անմիջական նպատակն է՝ համայնքաբնակների եկամուտների աճի ապահովումը	0	0.3	0.6	0.9	1.2	1.5
Ծրագրի հիմնական գործողությունները	<p>Ծրագրի հիմնական գործողություններն են՝</p> <p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.</p> <p>1.1. Ձեռք բերել 1կմ երկարության համար ազբոխողովակներ և ցեմենտ:</p> <p>1.2. Համայնքի կողով անցնող գետից մինչև վարելահողեր տանող ուղին փորել:</p> <p>1.3. Խողովակաշարն անցկացնել:</p> <p>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.</p> <p>2.1. Ձեռք բերել ջրատար 1 կմ երկարության համար խողովակներ, էլեկտրոդ և փականներով բաժանարարներ 20 հատ ոռոգման ներքին ցանցի համար:</p> <p>2.2. Խողովակները միացնել:</p>					
Ծրագրի բյուջեն	<p>Ընթացիկ ծախսեր՝ 0,5 մլն դրամ</p> <p>Կապիտալ ծախսեր 1 մլն դրամ</p> <p>Ընդհանուր բյուջեն՝ 1,5 մլն դրամ</p>					
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	<p>1. Աշխատուժ</p> <p>2. Ծրագրի արժեքի 3% գումարի ֆինանսավորում</p>					
Ծրագրի հիմնական ռիսկերը	1. Դրամական միջոցների ձեռքբերում					

Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչություն
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017թ- 2021թ
Ծրագրի համառոտ նկարագրություն	<p>Կատարել չափագրում: Կազմել պլանային նախագիծը և բյուջեն: Գտնել դոնոր կազմակերպություն: Ներկայացնել գրանտային ծրագիր դոնոր կազմակերպությանը: Ծրագրի հավանության արժանանալուց հետո, ստանալ համապատասխան գումարը և կազմակերպել աշխատանքները: Կատարել համայնքային ներդրումներ: Համայնքում ներկայումս չի ոռոգվում է 41հա տարածություն: Ծրագրի իրականացումը կապահովի 41հա ոռոգում՝ համայնքաբնակներին ընձեռնելով հնարավորություն ավելացնել դաշտավարության և գյուղատնտեսության ծավալները և հետևաբար նաև եկամուտները</p>

## Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

### «Որակյալ խմելու ջրով ապահովում և ջրմուղ-կոյուղու կառուցում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Որակյալ խմելու ջրով ապահովում					
Ծրագրի անմիջական նպատակ	Համայնքը խմելու ջրով ապահովում					
	<b>Ցուցանիշներ</b>	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2016	2017	2018	2019	2020
համայնքաբնակներին բավարար քանակի մանրէազերծված ջրով և կոյուղով ապահովումը	0	4	8	12	16	20
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Համայնքը խմելու ջրով ապահովում					
	<b>Ցուցանիշներ</b>	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2016	2017	2018	2019	2020
համայնքաբնակներին բավարար քանակի մանրէազերծված ջրով և կոյուղով ապահովումը	0	4	8	12	16	20
Ծրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.</p> <p>1.1. Ձեռք բերել 75.50 մմ տրամագծով 540 գծամետր խողովակներ,</p> <p>1.2. Գործող ջրագծի վնասված խողովակները փոխարինել նորով:</p> <p>1.3. Տեղադրել փականով բաժանարարները՝ բաշխումը կատարելով հավասարաչափ:</p> <p>1.4. Ներքին ցանցի խողովակների անցկացում:</p> <p>1.5. Պարբերաբար կատարել խմելու ջրի մանրէազերծում սանէպիդկենտրոնի օգնությամբ:</p> <p>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.</p> <p>2.1. Ձեռք բերել ագրոխողովակներ 1կմ-ի համար, ջրհորի մետաղյա կափարիչներ, ցեմենտ և փականներ ջրմուղ կոյուղու համար:</p> <p>2.2. Խողովակները միացնել:</p>					
Ծրագրի բյուջեն	<p>Ընթացիկ ծախսեր՝ 5մլն դրամ</p> <p>Կապիտալ ծախսեր՝ 15մլն դրամ</p> <p>Ընդհանուր բյուջեն՝ 20մլն դրամ:</p>					
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ նեսուրսներ	<p>1. աշխատուժ</p> <p>2. Ծրագրի արժեքի 3% գումարի ֆինանսավորում</p>					

Ծրագրի հիմնական դիսկերը	1. Դրամական միջոցների ձեռքբերում
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչություն
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017թ- 2021թ
Ծրագրի համառոտ նկարագրություն	<p>Կատարել չափագրում: Կազմել պլանային նախագիծ և բյուջե: Գտնել դոնոր կազմակերպություն: Ներկայացնել գրանտային ծրագիր դոնոր կազմակերպությանը: Ծրագրի հավանության արժանանալուց հետո, ստանալ համապատասխան գումարը և կազմակերպել աշխատանքները: Կատարել համայնքային ներդրումներ: Ներկայումս համայնքում ջուրը հավասարաչափ չի բաշխված, ջրի քանակը չի բավարարում բոլորին և ջուրը չի ֆիլտրվում ու չի մանրէազերծվում, բնակչության 80%-ը ջուր չունեն: Ծրագրի իրականացումից հետո համայնքի բոլոր բնակիչները կապահովվեն բավարար քանակի մաքուր ջրով: Համայնքը չունի ջրմուղ-կոյուղի: Ծրագրի իրականացմամբ համայնքի բոլոր 90 շահառուները կօգտվեն ջրմուղ կոյուղուց: Համայնքում առկա զանազան հիվանդությունների վտանգը կվերանա, կոմունալ տնտեսությունը կգարգանա:</p>

